

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշագրիչի համար	
Տարեկան	10 Ձր.
Վեցամսեայ	5 »
Սրբապատկերի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 շր.
Վեցամսեայ	1.25 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրանացի սուրբ առաջին երեսին համար 40 ասկրիվ հ. իսկ վերջին երեսին համար 20 ասկրիվ հ. երեքին ասկրիվ անգլիական համար 20 0/10 գեղջ կըլլայ:

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախակ եւ դրամ դրկեչ
 Խմբագրութեանն հասցիքն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Դրոթիւնքն եւ չին տրուի

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ, 10 ՍԱՆԹԻՄ)

ԱԶԴ

Պատիւ ունիմ ծանուցանել տեղւոյ մէջ բնակութիւն հաստատող մեր յարգոյ գաղթական ազգայնոց, որ իրենք եւս այսուհետեւ տեղւոյս ազգայնոց նման իրաւունք ունին քուէարկութեան մտանկացիլու, ուստի զայս ի գիտութիւն կը հրատարակեմ ամէն գաղթական ազգայինքն՝ որ զայ բարեհաճին իրենց անունները արձանագրել աւալ տեղւոյս ազգայնոց ընտրական ցանկին մէջ:

Մ. Տէր Մարտիրոս Մարտիրոսեան

ՄԻՅՏ ՎՆԱՍ

Սեր «գրական» բաշխողուները» իրենց ստոր կրքերին յագուրդ տալու համար, յանկարծ այնպիսի խնդիրներ և հարցեր են հրապարակ գցում որ ամէն մի հայի «յայտնի և որոշ պատճառներով» անկարելի է լրագրութեան նիւթ դարձնել: Այդ բաշխողուները խնդիրը հրապարակ նետած միջոցին իրանք էլ շատ լաւ հասկանում են իրանց քայլի որ ստորագրելու ստոր լինելը, գրա համար էլ իսկոյն սրտացաւ ազգասէրի դիմակ են հագնում և իրանց ազատութեան փնտրակար քայլը համեմատ «ազգի շահ և ազգի օգուտը» դարձնում են:

Ինչո՞ւ, թշուառ հայ ժողովուրդ, քեզ օգուտ բերելու պատրաստուի ինչ ազատութիւններ, ինչ վատութիւններ չեն անում մեր գրական բաշխողուները: Եւ դու միշտ փնտրում ես, ու ցաւալին այն է որ դեռ պէտք է փնտրվեալ:

Աչքի առջ ընկնելով մինչեւ հիմա հրապարակ եկած բոլոր այն խնդիրները, որոնք վերաբերում են մեր յեղափոխական կազմակերպութիւններին ուղղելու, զեղծումները ձաղկելու, տեսնում ենք որ յարձակվողները մեծ մասամբ եղել են միշտ նրանք, որոնք պատրաստ են ամբողջ հայ ազգը «հողով և

մարմնով» զողանալ իրանց զոյութիւնը պահպանելու համար. նրանք, որոնք մեծացել են գողերի և ցածրի միջավայրում գողութեամբ ծնվել և սնվել են: Եւ երբ տեսել են որ յեղափոխական որեւէ մարմին ճանաչում է իրանց գող, վատ, դատաճան ու հացկատակ լինելը ու զզվելով հեռու փախչում. գրանք կատարել, բարկացել և որոշել են վրէժ լուծել իրանց վատ էութիւնը ըմբռնող մարմիններից և նրանց գործիչներէր:

Եւ որչափ վատ, ցած տիպեր են գրանք, եթէ ամէն մէկի պատկերը նկարագրես, մարդկարող է քստմնիլ. գրանց համար ոչ մի սրբութիւն գոյութիւն ունի. գրանք պատրաստ են ծախելու կին, քոյր, հայրենիք, ազգ և ամեն ինչ՝ ինչ որ մարդկային է. միայն թէ իրենց ստոր կրքերին յագուրդ տան, իրենց արհամարհողին փնտան, իրենց փնտրակար գոյութիւնը քաշքշեն:

ՎԱՐՈ

ԱՆՈՐԱԿԵԼԻ ՔԱՅԼ ՍԸ

Սեւ կիրքը կը հասնի այլևս իր ստորնութեան վերջին ծայրին: Անձնական կիրքը կը յաղթէ ամէն ազնուութիւն՝ հակառակը գործել տալով:

Ամբողջ ազգի մը գոյութիւնը կը զսոսնի միայն ու եւ ստոր կիրքի համար: Իրաւունքի վերջի 84 համարի մէջ խմբագրութեան կողմէ երեցած յոյուածը իր ամբողջութեամբ կը լրացնէ վերոյիշեալ բոլոր արարքները: Մարմնոյ կամ անհատի մը վրայ կը յարձակի ինչ ինչ յայտնի պատճառներէ թելադրուած՝ որ ամէն ազնիւ հայու առաջ չի պիտի կարենայ ինքզինքը պաշտպանել մամուլի միջոցաւ: Այլևս ու եւ բանի ազնիւ նկատում բնաւ գոյութիւն չունի իրաւունքի խմբագրին համար:

Այս կարող է հակահասարակ ամէն հայ որ կարող է ողջ մտքով խորհիլ: Միմիայն մի մարդու վրայ անձնական ստոր կիրքը յաղթանակով ամբողջ հասարակութեան մը շահերը սո ոչինչ համարելը ազնիւ մարդու գործ չը լինելը դեռ եւս չէ կրցած հասկնալ մեծ խմբագիրը:

Ինչ կը հասկցուի այս յոյուածը գրելէն... եթէ ոչ բարոյապէս ապալել ջանալ ամբողջ կուսակցութիւն մը՝ որուն մէջ ցարդ ու եւ վատ արարքի ծածուկ փառ տեսնուած չէ, կամ թէ յանցաւորը անպատիժ չէ մտացած (*): Այդ միջոցով թող չկարծէ Պ. խմբագիրը որ իր նպատակին կը հասնի:

Պ. խմբագիրը իր վարկը բոլորովին կորսնցուցած է ամէն անոնց քով, որոնք ինչպէս որ ըսինք կարող են լրջօրէն մտածել ու եւ գործի նկատմամբ:

Գուցէ եւ համակրութիւնը եթէ կար: Այս քայլը մենք ուրիշ կերպով չենք կարող մեկնել եթէ ոչ վատութիւնով:

Վատութիւնը միմիայն այսինչը կամ այնինչը բացարձակապէս ձեռք տալով չի լինիր:

Մենք բացարձակապէս կը դատապարտենք Պ. խմբագիրը իր այդ բռնած ընթացքին համար:

Չենք կարծեր որ մեզի հետ չը լինին նաեւ մեր բոլոր ինքնաճանաչ հայ երիտասարդները:

Մենք հակառակ չենք զեղծում մը մտանցոյց ընելու, բայց միայն այն ժամանակ երբ հաստատ տեղեկութիւններ ունինք թէ կազմակերպութիւն մը բարձի թող ըրած է զայն եւ իսկապէս կուզէ թագցնել:

Ընդհակառակը մենք համոզուած ենք որ ժամանակէն առաջ այդ գոյնի զեղծում մը հրապարակ նետելը պիտի խանգարէ կազմակերպութեան իր որոշումները գործադրել և ուրիշ այլ վնասներ հասցնել:

Մեզ ծաղրելի կը թուի այն անհեթեթ կարծիքը թէ յեղափոխական կազմակերպութիւն մը իր մէկ վատ անդամին արարքը կը ծածկէ որպէսզի կարենայ ստակ հաւաքել:

Շատ ուրախ ենք որ Դաշնակցութիւնը իրեն արուած նուէրները գոյքերու կը յատկացնէ՝ եւ ոչ թէ ունայնօրէն կը ծախսէ:

Միայն կը ցաւինք որ վատ հայը ամէն տեղ կը գտնուի եւ կուսակցութեան մը համար անհնարին է ամբողջ հայութիւնը հրեշտակ դարձունել:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

(*) Ազգօգուտ իրաւունքի ազգասէր խմբագրութեան այդ յոյուածը իր ազնուութեան հայրենասիրութեան ինչ փնտնանման գրական կարող է համարվիլ:

Չաքրեանի եւ ձգնաւորեանի կուսակիւն ու Տաւրուսի յաջորդ էր հար-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻԶՄԻՐ, 2 ՆՈՅՆԵՐԻՆ

Լաւ գրող բայց ոչ լաւ մտածող տեսայ ձեր թղթակիցը մանաւանդ իր վերջին նամակին մէջ:

Քամահարմարի արարքով մը կողմէ իզմիրցին, յենով զիւրպէի մը բարբաջանքին:

Եթէ մասնաւորիով պիտի դասենք ընդհանուրը, գործ ունինք բայց մէկ ծաղիկով գարուն չըլլար: Ու այդ մէկ կամ մէկ քանի «ծաղիկներով» հասարակութիւն մը որակելու, ժողովրդի մը սիրտն ու զգացումը չափել, փաստել ուղիղ բանին հակառակ է:

Գոթօթները կսիրեն միայն հաջել. Մանաւանդ միտի մը ձարտանքով ոչ իզմիրցիներ կը նստանայ ոչ ալ յեղափոխութիւնը նկուս կը մայր ինչո՞ւ զայրանալ ու սագնապիլ...

Պաշտպանի զէպն ալ խեղաթիւրուած է. վարժուէի չկայ գործին մէջ. զրոյցը կրբեմն նենգամտօրէն կը յերկրուի: Եղած ամբաստանութիւնը սա է. ուսանողուէի Օր. Ա. Մ. ի այտերը գգուած, բոլոր խմցուցած եւն. եւ ի վարձ, ի արիտուր դաղանապահութեան, ժպիր գգուածքին, յառաջիկայ շրջանին օգնական վարժուէի ընել խոստացած է. բայց այս չար աղջիկը խոստումին կարեւորութիւն չի տար, կը հրապարակէ. Պաշտպան կը շղկուի: Կը շփոտէ քննութեան մէջ. պաշտօնանկ եղաւ: Բայց այս անկումը արդար, բաւարար հատուցում մը չէ: Միւսս Առաքելեանը մասնող վատը աւելի մեծ բանի մը արժանի էր:

Կաւոր, եւ իրաւունքը պատուաւոր կերպով նրանց տեղը բռնում է. այդ երկու սիրահոչակ թերթերը ազգասիրաբար ձամբորդող դաշնակցականներին անունը եւ տեղերն էին յայտարարում, իսկ իրաւունքի աւելի առաջ է անցնում... Հայրենասիրական մեծ յառաջդիմութիւն:

Չէ որ անարժան յեղափոխականներին զիմակազուրկ են անում, այսինքն պարզում են թէ Դաշնակցականները ուր ինչ գործեր են կատարում եւ ուղքեր են: Իրաւունքին յաջողութիւն ենք մաղթում իր այդ բռնած ուղիի մէջ: Ազգը մեծ, շատ մեծ օգուտ պէտք է ունենայ: Եւ իրաւունքի Պարոն խմբագրին իր կենդանութեան ժամանակ արձան պէնք է կանգնեցնել:

Մ. Խ.

Պատրիարքարանի թեկադրանքին
ի պատասխան Մեկիքսեցիկ Սրբազա-
նի առաքելութիւնները Սուրհանդա-
կէն ստանալով արատապաճ էլք Շար-
ժումի մէջ :

Ո՛չ սրբանոցները՝ որոնց համար
բան մը մտածած չունի, ո՛չ գաղ-
թականները՝ որոնց կարեկցած չու-
նի, նորին սրբազնութեան օձիւն
չպիտի բռնէին, եթէ իզմիրցին ալ
մասնակցելը Հայաստանի պէտքերուն:

Այսօրն էր կրկնապիտի ի նպաստ
ըրած հանգանակութեան գէժ ո՞վ
արտնջաց, մանաւանդ որ կործանած
վնասուած քաղաքներու մէջ հայ ազ-
գաբնակութիւնը շատ ցանցառ է ու
բազմաաբար անփաս :

Բայց նոյն միջոցին նորին Սրբազ-
նութիւնը իր խնային՝ Յորէիան
հանդիսին փայլ ու յուրով համա-
կուած երկնային թեկադրանքին
անգամ չպիտի անսար :

Արեւելքի թղթակցիցը մեղքը հա-
րուաններուն կը վերադրէր. բայց
ո՞ր հարուստը պիտի առարկէր, պի-
տի մերժեր եթէ ձեռնարկուէր.
ըսինք. Յորէիարին 1000 ոսկի (-)
մը կուզէր նուիրել. Հայաստանի
հանդէպ լեւափակ մնաց, կեցցէ :

«Բարեկամ, բաւ խօսակիցս,
Պոյսեցիները այս մտրդուն սիրաբը՝
իզմիրցիներէն վրէժ լուծելու համար,
փորձած են» Աստուծո՛վ զանաւ Բաղ-
կեդոն . . .

ՆժԻԵՆ

ՆԻԻ-ԵՕՐԲ. 30 Հոկտ.

Ամսոյս 29ին կիրակի, Ուէսթ-
Հոյօքընի հայերը Հայաստանի
հաղարուսը նահատակաց տարե-
կան սգահանդէսը կատարեցին ի
ներկայութեան խուռն բաղմու-
թեան մը :

Սոյն հանդէսը իր տեսակին մէջ
առաջինն եղաւ ըսիմ ծայրայե-
ղութեան դիմած չեմ բլլար. ժո-
ղովարահին ճակատը, գրեթէ բե-
մին վրայ դրուած էր սեւերով
ձածկուած մի գաղաղ որուն գլխի
կողմը Մայր Հայաստանի զեղե-
ցիկ մեծագիր մի նկարը կար
ծաղիկներով շրջապատուած և
կռնակը սեւ խաչ մը առած գոգ-
ցես կողբար հին և նոր նահատակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇԵՑԻ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ

«Բայց քե՛սր մեկը իրեննե-
տուն ու մանաւանդ՝ իր
օրնսանեացը հոգ չի սանի,
սանիկա հաւասքը ուրացած
սէ, ու անհատե՛կ մըն ալ
«գեղ է» :

«Տիւրքիսու Ա. Գյ. Ե. հմր. 8»

Այս օրերս, Պոլսոյ թերթերուն
մէջ, նկատուած թեան կէտ մը կրնայ
համարուիլ ա՛յն պաշտօնական կոչը,
զոր ըրած էր Մշոյ առաջնորդարանը
ըտր Մշեցի պանդուխտ ազգայնե-
րուն :

Ո՛չ մէկ տեղ այնքան ստուար՝ հո՞ծ
համարմբում մը Մշեցի պանդուխտե-
րու չեմ կարծիր թէ կայ, որքան
Դանուբեան եղբայրները, Ռուսման-
Տան նաւանդիսաներուն մէջ. Սու-

ղաւակունքը. դազալին երեսը
ձածկուած էր ծաղիկներով և
վարդէ պսակներով ու երկու կողմն
ալ ըստ Հայաստանեայց եկեղեց-
ւոյ սովորութեան աշտանակի վրայ
մոմեր կը վառէին. վերս պէս
զազալին սյնպիտի խորհրդատու
և տխուր մի երեւոյթ տրուած էր
որ ի տես անոր ամենէն անզգան
և անտարբեր իսկ կը յուզուէր
և կը փշռուէր. ժողովին կը նա-
խագահէր Սրբ. Տէր Վաչրամ քա-
հանայ և Ստեփանոս էր Պ. Ս.
Ալիփուռեան. ժողովը բացուե-
ցաւ «մայր մը ունէի ես միայն»
տխրազգեցիկ երգովը զորն լա-
կերպով դաշնակեց Պ. Ա. Պաս-
մանեան. Արժ. Տէր Վաչրամ քա-
հանայ նախ քան զպաշտամունք
հակիրճ և զեղեցիկ կերպով բա-
ցատրելով հայ ազգի կրած դա-
րաւոր տառապանքներն ու հալա-
ծանքները և առ այդ ցոյց տուած
տոկունութիւնն ու համբերատու-
րութիւնը՝ քաջալերեց զներկայս
որ ազգային պատմական համբե-
րատար ոգւովն անվհատ շարու-
նակեն իրենց ճամբան և վստահ
ըլլան թէ ապագան իրենցն է.
այս Տէր Հայրը իր խոսքն առած
ձեռքը Աւետարան և Խաչ զազա-
լին մտեցաւ, և եկեղեցական եր-
գեցողութեանց հմուտ երիտա-
սարգներ դազողին շուրջը բո-
լորած և ժողովուրդն յոտնկայս
տխուր շարականներով և աղօթք-
ներով կատարուեցաւ հոգեհան-
գիտքը : Յուարտ պաշտաման Պ.
Կ. Պէրպէրեան պերճիմաստ ճառ
մը կարգաց նիւթ ընելով՝ «Գոր-
ծելու» Պարոնը այնքան բնական
ճարտար ձևեր և շեշտեր գոր-
ծածեց որ ներկայից կողմանէ
քանիցս ծափահարեցաւ. Երկ-
րորդ ճառաբօսն էր Պ. Ս. Ալի-
փուռեան, որը, խնամով պատ-
րաստուած զեղեցիկ ճառ մը կար-
դաց. նիւթն էր՝ «խիղճք քննէ»
այս պարոնը բաւական աշխատու-

թիւն յանձն տուած էր ընդարձակ
կերպով նկարագրելու Հայաս-
տանի ահռելի կոտորածի ման-
րամանութիւնը, Սուլթանի
պաշտօնէից, զինուորաց և թուրք
խուժանի կողմէն ի գործ դրուած
խմորութեանց ամէն տեսակները
և Հայաստանի հայուն ներկայ
դառնալէտ և տառապալից վի-
ճակը ևն. կրկնակի ծափահարու-
թեամբ զնահատուեցաւ այս ի-
կապէս գնահատելի գործը :

Յետոյ Օրիորդ Մարի Մարլեան
բեմ եկաւ և իրեն յատուկ յուրիչ
շեշտերով ու ձևերով Պ. Տառա-
եանի բանաստեղծութիւնէն «Այս
Հայերն» արտասանեց. ժողո-
վորդը իսկապէս յուզուած կը
ծափահարէր ու զննապէս. Նե-
տոյ ճանօթ դաշնակահար և
երգիչ Պ. Մ. Թաշճեան ազգային
երկու զեղեցիկ երգեր երգեց և
դաշնակեց. զարձայ բուն ծա-
փահարութիւնք. Օրուայ առե-
նակուած նիւթ ունենալով Սալմո-
սէն զլուխ մը «թէ մոռացայց
զքեզ երուսաղէմ մոռացի զչաչս
իմ և այլն» . զրեթէ մէկ ծա-
մու չափ խօսելէ և երգեցիկ
խումբին կողմանէ ուրիշ մի քանի
ազգային ընտիր երգեր երգուելէ
յետոյ ժողովը փակուեցաւ. Ներ-
կայից գեղեցիկներ վրայ զոհու-
նակութեան նշաններ կը նշմար-
ուէր սրունք խիտ լաւ տպաու-
րութեան տակ մեկնեցան. իսկ
Երիտասարդութեան այն մասը
որ մազապուր ալատուած ահռելի
կոտորածէն, հոս աստղերու դրօ-
շակին տակ եկած էր ազատուէն
յիշատակել իր նահատակ եղ-
բայրները, օրուայ աստեղախօսին
առաջագրածի պէս կարծես լու-
րեայն ու խեղ կընէր չը մոռ-
նալ Հայաստանը և լալ ու ար-
տասուել միայն այդ օր այդ դա-
զալին շուրջը, և յետ այնու
ժպտադէմ շարունակել այն «մեծ
գործը» որով միայն կարելի պիտի

ըլլայ ձեռք ձգել ազգային վեր-
կութիւնը :

Այս հանդիսին մէջ ուրիշ կա-
րեւոր մի կէտ գրուած էր իմ
ուշս. հրաշք կը տեսնէի հոն. կը
տեսնէի թէ այդ պարոնները ո-
րոնք այսօր զեղեցիկ ճառեր
գրած էին և յաջողապէս կար-
դացին զայնս. այո՛, այդ պա-
րոնները քանի տարի առաջ մինչ-
գեռ հայրենիքէն, չունէին ոչ
գրելու այդ կարողութիւնը և ոչ
ալ կարողաւ համարձակութիւնն
ու վարժութիւնը. Ասունք 2—3
տարիէ յետոյ Ուէսթ-Հոյօքընի
մէջ անընդհատ շարունակուած
ազգային լսարանին կը պարտէին
իրենց յառաջդիմութիւնն ու յա-
ջողութիւնը. այս լսարանը գոր-
ծած էր այդ հրաշքը. Ահա այժ-
պիսի իրական թանձրացեալ օրի-
նակներ մասնանի ընելու է այն
կարգ մը յիմարներուն սրունք
լսարան-ընթերցարանի պէս օգ-
տակար հաստատութեանց կը հա-
կուակին մինչեւ իսկ արգելքներ
յարտացանելով ըստ իս :

Վ. Մ. Չ.

ՍԱԹՍՐ-ԲԱՉԱՐՃԸԳ. 25 Հոկտ.

Լրագրոյդ հոկտ. 9, թիւ 170 և
«Իրաւունք» հոկտ. 13, թիւ 78
Ա. Ե. ստորագրութեամբ գրուած-
ները կարդացի, որ՝ տեղոյս
թաղական խորհրդոյ պաշտօնա-
կան գրութիւնն հերքելու ճիգով,
կարգ մը սուտ ու անտեղի զըր-
պարտութիւններ ալ մեր գլխին
տեղացուցեր է, որպէս զի ըն-
թերցողը կատարելապէս համոզ-
ման մը յանգին, կը փութամ
սուտ վերջնականապէս լինելու
պայմանաւ՝ իր զրպարտիչ սուտ
տերն երեւան հանել :

— «Պ. Յարութիւնեան և թ.
Միւրճանեան... գործիք են դար-
ձեր, ես այնպէս կը հաւատամ թէ
իրենք ստորագրութիւն գրած են

լինայ, կալաց, Պարիսյեւ այլուր
եւ արդարեւ, այս քաղաքներուն
մէջ, հայ դպրութիւն է՛ն ակներեւ,
բացայայտ մէկ մասը կը կազմեն
Մշեցի այս հայաստանցիները. որոնք
կը բնորոշուին իրենց արտաքին
տարազովը, բարքովը ու կրթու-
թիւնովը ընդ որում անհատներէն :

Անուխի բեռնակիրներ են անոնք
առ հասարակ. որոնք իրենց հացը
ճարելու համար, դատապարտուած
են շարունակ սեւ փոշիներու մէջ
պարտուելի, չարչարուիլ . . .

Ան այս անբախտներուն կիներն
են որ, ծայր աստիճան նեղուած
չքաւորութեան, տառապանքի և
հաղոր ու մէկ մարդկային նեղու-
թիւններու մէջ, կը բողբոքեն Մշոյ
առաջնորդարանի, և վճռական եր-
կու բան կը պահանջեն. կա՛մ յա-
րաբերութիւնը՝ նամակով, օգնու-
թիւնով կամ հայրենիք վերադարձով
5—15 տարիներէ ի վեր իրենց կոր-
սուած ամուսիններուն, և կա՛մ
հրաման մը՝ կրկնամտանութեան :

Ամէն մարդ, աշխարհի մէջ, հաց
մը ճարելու համար, հեռուոր ան-
կիւններ կրնայ գլխի և շատեր կը

դիմեն, սակայն եւ ոչ ոք չէ հասու-
ցած անպարտաճանաչութեան, ան-
տարբերութեան չափը մինչեւ ա՛յն
եղբը. որուն անգունդին վրայ կը
տեսնուին մեր մշեցի պանդուխտե-
րը :

— Ի՞նչ են, սակայն՝ պատճառ-
ները :

Յուզով մը, չպարտքերու ճնշու-
մին տակ ծնած ընթերթեան մարդը,
իր հայրենիքուէն կը ձգէ մշեցիին,
ինչպէս առ հասարակ, բոլոր հայ
պանդուխտները : Այս վերջինները,
սակայն, բնութեան իրենց սուտ
բոլոր կարողութիւնները անդադար
կը ջանան գործածել, անոնցմէ շահ
մը, օգուտ մը, ի կական դրամա-
լուծի մը ճարելու համար : Իրենց
բոլոր կեանքը նուիրած են իրենց-
ներուն բարօրութեանը. օր մը ա-
ռաջ անոնց քով ժամանումին կը
ջանան. նոր լուր, նոր նամակ
ստանալը, գրելը՝ իրենց կեանքին
անպայման մէկ պէտքն է. որոնց
գործադրելու մղումը ունին իրենց
սրտերուն մէջ : Իրենց այդ մեքե-
նական ընթացքին մէջ չեն անտե-
սեր, իրենց ուժին ներածին չափ,

ո՛չ նորահնարութիւն, ոչ նոր զար-
գացում, Լարուած ընդունարան մըն
է ան, պանդուխտութեան մէջ, որ կը
չարժի մշտապէս :

Այդպէս չէ, սակայն, առ հասա-
րակ մշեցի պանդուխտը. հայրենի
հողէն դուրս՝ անոնց միայն իրենց
ջղուտ բազուկները և թիկունքնե-
րը գործածել վիճակուած է. առա-
ջին օրը բեռնակրութիւնը կը տես-
նէ ան, անոր մէջ կնկղմի անգամ
մը, ա՛լ անկէ դուրս չելլելու հա-
մար : Մաքի, խելքի ու ժը զարգա-
ցընել և գործածել անընդունակ ըլ-
լալուն՝ ինք իրեն վճռած է : Տաճ-
կաստանի մէջ, Ռուսմանոյ մէջ և
ամէն տեղ այդ բեռնակիր տիպարով
է որ կերեւայ միշտ ան մեղի :

Կը կրէ ու կը կրէ հանքածուխը,
կը յողմի և թիկունքուտ համար ու
գլխից ըմպելիքի մը կը կտրտի,
ատի կը կրկնէ, իրեն ուղորտութիւն
մը կընէ. մինչեւ որ ա՛լ անբաժան
կրնէ իրեն. անկէ վերջը, ա՛լ մնաս
բարով, հայրենիք, սուտ, տեղ,
ընտանիք . . . ապկարայութիւնը,
անապուտութիւնը կը թաղաբոյժի իր
ամբողջ կուրծեան վրայ, որուն ան-

առանց գիտնալու նամակին պարունակութիւնը, արդէն հայերէն չեն հասկնար... Ահա՛ մեր պատմական Ամբակում ազային մէկ գիտաոր սուտն որ հրապարակ կը նետէ խոստովական ճիգերով. նախ թէ ինչ ինչ փոյթ որ իր առ թաղական խորհրդոյ զրպարտութիւնք հերքելու համար համոզեմ զանոնք որպէս զի հերքմնագիր գրեն, և թէ դասա-սու մը, որ քա՞ն աղբեցիկ լինելու է որ կարողանայ ճշում բանեցնել ու է խորհրդոյ մը վրայ, և միթէ ամօթ չէ՞ «հայերէն չեն հասկնար» ըսել. արդեօ՞ք անգամներէն ովանք իրմէ նուազ կը հասկնան. և յիմարութիւն չէ՞ նոյն հերքմնագիրը զրոզը յանցաոր գունալ քանի որ պաշտօնագէտ թաղ խորհրդոյ գիտնի ստորագրութեամբ հերքած են. եթէ այս այսպէս է Ամբակում ազայի զրածն զրպարտութիւն մը չէ՞:

— «Հոս ամէն կիրակի միայն մեր վարդապետը (որուն նմանները իրօք քիչ կան) տեւիլ քաղաքէն կը լսեմք որ կաշխատի ազգը համոզել Գաշնակցականներու հերոս և յեղափոխական չինել, օգնականութեամբ... Ահա վրան բայ սուտ մըն ալ զոր երևան հանելու համար բաւ է իր երկու հատուածն աստ կրկնել «տեղւոյս հայութիւնը տարիներ առաջ իր մէջ շատ անհամաձայնութիւններ և կուսակցական պառակտումներ ունեցած է և շատ փաստաւոր, հիմա փորձառու ըլլալով միշտ կը խորշի այդ տեսակ հանգամանք ունեցող խնդիրներէ և առ թիւնէ» (տես «Իրաւունք» 67 թիւ) «Հոս կուսակցական մարդ չի կայ» (Երաժշտութիւն 170 և Իրաւունք 78 թիւերն): Հիմա ժամանակը չէ՞ հարցնելու թէ՞ Ամբակում աղա զու եկեղեցի չի գալովը հանդերձ կելլաս քու հասակէդ ալ աւելի բարձր սուտ մըն

ալ հրապարակ կը ձգես. զոնէ քու գրածէդ ալ չամչցա՞ր. կերբ ի թէ «քաղաքականութիւնը» նորէն փոխուեր է...:

— «Իրաւունքի թիւերը գըրպանը սրճարանէ սրճարան, խոնութէ խոնութ, տունէ տուն պատելով զրաճները ուզածին պէս մեկնեց և գրգռեց միւսմիտ ժողովուրդը մի քանի կուսակցութեանց բաժնելով... նախ թէ քաղաքիս հայոց սրճարանը քանի է, և թէ ի՞նչ հարկ «Իրաւունք» թիւերը զրպանս գրած չըլլիմ ու ուզածիս պէս մեկնեմ. քանի որ ինչ նկատմամբ ուէ բան գրուած չէ. նա մանաւանդ «Թահմիլ» չեմ որ սրճարանէ սրճարան երթամ յաճախորդ որսալու և կամ ոչ իսկ սիրահար «չէսուսէ» ու «սանթասէ» խաղերուն և ոչ իսկ բազոսի խնկարկուններէն, միթէ սա ալ զրպարտական ստութիւն մը չէ՞:

— «Ասկէ զատ յաղոցեալ «չօպաճի» խումբ մը կազմել շնորհիւ մի քանի աղաներու համա-մտութեան, որոնք ստոր անոր հետ ուրիշ հաշիւներ ունին, կուզեն առ թիւն օգտուիլ, առաջին փորձը ի՞մ վրաս կատարեցին... Ահա մեր Պ. Ա. Շ. ին խոշորէք սուտերուն մէկն ալ, ոչ լեզուին ու կողորդին մէջ թափթփելով կը գլորէ. ուստի պարտ անձին կը համարիմ սա կէտն ալ ճշդիւ պարզել. իրեն հետ կուր մտնել ուզող իր ընկեր և բարեկամ Սարգիս Գանձարեանն է որ՝ սրճագործ մըն է և Ամբակում ազայի յաճախորդը՝ բազմիցս տեսնուած է միասին բազոսի խնկարկելին. բնական է երբ գլուխները տաքնան խելքերն ալ կը զառնան, ուրկէ կատիպուին շատ անգամներ իրար հետ շատ մը ծանր և վերաւորիչ խօսքեր փոխանակել և մինչև իսկ կուրներ ընել. այսպէս եղած է նաեւ մեր Ամբակում ա-

զայի վիճակն... որուն ներկայ են եղեր, Տիրաք Վարդան Գէորգեան, Թագուր Մ. Նիկողոսեան, Պետրոս Յարութիւնեան, Յարութիւն Թէրթրապլեան, Անտոն Ծահրիկեան, իր խոնութ ընկեր առձիկն և այլք որոնք գործին ակնատես են եղեր, իսկ Անտոն Ծահրիկեանի եղբոր Պ. Արտաշէսի հետ միասին որ պատյոյի գայած էր կուր վերջացած էր սրճարան եկանք. ուրկէ ամէնքս միասին ելանք առն գայցինք, ու թիր ազգական Ծահրիկեան եղբարց և Յարութիւն Թէրթրապլեանի ներկայութեան մանրամասն պատմեց իր մտերիմ Փափագեանի նկատմամբ հնչակեան մանաճիղերէ առ ինքն վերապահեալ շատ մը վատութիւններ... հիմա Ամբակում աղան փոխանակ ըրածին վրայ ամչնալու և լեզուին ու սրկորին սանձ գնելու իրաց կացութեան ալլանդակ դոյնէր տալով այլոց վերագրել կը ճգնի:

Արդ ձեր թղթակցին իւրաքանչիւր պարբերութիւնն ուղղելէս վերջ, ձեր և ընթերցողաց լուրջ ուշադրութեան կը թողում «չկայէն խնդիր հանդիներ» վրայ ճշմարիտ համոզում մը գոյացունելը:

S. Վարդանեան

ՊՈՒՐԿԱՁ, 29 Հոկտ.

Ինչպէս որ ասկից առաջ յիշած էինք թէ՛ լրագրութիւնը ժողովրդեան վարժարան և միանգամայն վարժապետ եղած է անոր լաւ և չար կողմերը նկարագրելով, վատին ձաղկելով ուղտութեան բերելու, իսկ լաւին քաջալերելու, ուստի իւրաքանչիւր անհատ այս ի նկատի առնելով՝ երբ կը տեսնէ հանրութեան շահեր ոտնակոյ ընող փաստակար տարր մը, պարտաւորեալ է լրագրութեան միջոցաւ հրապար-

ակելու, ատոնց ազգաբաւ ու փաստակար միտումներն խեղդելու, պարզ և միամիտ ժողովուրդն զգուշացնելու համար:

Մի քանի տարիներէ ի վեր է որ Պուրկազի մէջ հայ բնակիչը հո՞՞ք բազմութիւն մը մուտ գտած է, և ըստ բաւականին օրինաւոր գործեր ալ իրենց ձեռքն անցած է, տեղս գտնուող ինքնաճանաչ հայ վաճառականներու շնորհիւ. սակայն այդ երկար տարիներու շարքին՝ և օրինաւոր շահերուն հետ, հազար ու մէկ տեսակ զեղծմունք ու խայտառակութիւն ալ պակաս չեն եղած և ցարդ ըլլալու վրայ են. ստոր շարունակութեան պատճառը շատ պարզ է.— ժողովրդեան անտարբեր լուրս թիւն— արդեօ՞ք չկար մէկ մը այդ կորստաբեր հետեւանքն ի նկատի առնելով, հրապարակաւ ձաղկէր՝ որ անոնք եւս սթափելով զգուշանային երկընդործն եւս չգործելու, քանի որ եկեղեցիներն զպրօցնիս՝ կը շահագործուէր և թէ անհատական շահերն ոտնակոխ կը ըլլար:

Անուրանալի է որ երբեմն անկողնակի ձեւով դիտողութիւններ կը ըլլային, բայց նշանակութիւն չէր ունենար. անոր համար որ մասնաւորներ էին երբեմն երբեմն բողոքող և յուզողներն. իսկ միւս կողմանէ շահագործողք ժողովրդեան անգիտակցութեան և միանգամայն գէպի իրենց եղած համակրութեանն անխղճօրէն օգտուելով՝ թէ ժողովրդային հիմնարկութիւններ և թէ ժողովուրդը միշտ յետին ծայր թշուառութեան հասցուցին, ասով եւս չբաւականանալով մինչև դերբզման քաջկուսել տանիլ կը ձգտին:

Այդ գործուած զեղծմանց հանդէպ, մարդասիրական պարտքը մեր վրայ ծանրանալով, հարկադրուեցանք մէկ երկու պն-

հունապէս զարգացման պարտ հողը կը գտնէ այս ազա՞տ երկիրնե-րուն մէջ... Ալ ի՞նչ հարկ հարա-բատ ամուսնոյն, զաւկին ապրուստի ծանր հոգեբը ստանձնել, իր չափը, ա՛լ կը գանգաւի, չի բաւեր իրեն կեանքին, որքա՞ն զարգացած է անոր ճաշակը զինիի, օգիի, ցուրդայի եւ զուարճութեանց մէջ. ինչ՞ո՞ք մարդը, ասո՞նց զրամ հասցնէ ի՞նչ հեռուէն, իրմէ շատ հեռու եղող անպէտ էակներուն...:

Տարւոյն մէջ, ամէն եղանակի չի գտներ, սակայն, ան իր աշխատութեան գործը, ուստի, համբերող է ան. ժամանակ անցնելու համար թուղի կը խաղայ, խաղ կը խաղայ անդադար, սրտի նեղութիւնէն, ու այս պատճառով՝ ամիսներով շահածը կը կորսնցունէ շատ անգամ օրուան մը մէջ ալ, Գրամ չունի ապրելու, պարտքի սակ կիրնայ. անթիւ կը մնայ, բայց բնա՛ւ շարժում մը չընեն որպպահիկը ճարելու համար ուրիշ գործի մը վրայ խորհելու:

Քաղաքական անցքերով կը հետաքրքրուի, փրկութեանը կը սպասէ փամէ փամ Հոյաստանին, բայց

չզգար թէ՛ նստած տեղը ինք իր սուտը կը կործանէ.

— Ինչ սուտ կրուկ է կտա զազըթային մէջ՞ կը հարցնէ:

— Ես ձեզի կարդամ, մշեցի պանդուխտներ, ա՛յն նամակը, զոր ձեր Մուշի առաջնորդը գրած է միայն ձեզի, ձեր կրկնելու բերանէն.

«... Մենք, առաջ-տեղապահ Մշոյ, ակնատես եւ ակնաջալուր՝ Մշեցի դժբաղդ մանկամարդ կրկնելու աղբբաւնքին, զոր առաւելն մինչև իրիկուն կը բերեն կը թափին ստաջնորդարան, իրենց փոքրիկ ճփերով միասին, մենք տեսնելով անոնց փորձանաւոր կեանքը, անոնց մերկութիւնը ու անթիւութիւնը, անոնց կարօտութիւնը ու անպաշտպան վիճակը, պաշտօնապէս կոչում կընենք Մուշին, Գաշնակ պանդխտած բոլոր այրերուն. պանդուխտ մշեցիներ, յիշեցէ՛ք որ անմեղ աղջիկներու «մեղքը մտած» էք սիրով, ու խտով եւ հիմա երևի վրայ կը թողուք զանոնք.

Յիշեցէ՛ք, որ զաւակներ ունիք, որոնք ձեզ մոռցած են, որովհետեւ ձեր հայրական խնամքն ու գործը-

րանքը չեն վաւելած՝ եւ շատերն ալ ձեր երեսը չեն տեսած.

Յիշեցէ՛ք որ ձեր կրկնելու տեսակ ընտանեկան վշտերու կը դիմադրեն, որպէս զի ձեզի ու խտած հաւատարմութիւններն պահեն ու ձեր գալստեան կսպասեն:

... Հերքէ՛ք է. կըսեն, որ այսչափ սպասեցինք, կամ մեր ամուսինները, կամ մեզի ուրիշ ամուսիններ:

... Անգամ մը ձեր միտքը բերէք ձեր սուտն ու տեղը. ձեր կրկնելու ու զաւակներն, Ձմեռն ա՛նա եկաւ, հաց, հալաւ պէտք է. իրենց պատուոյ պաշտպանութիւնն ամենէն մեծ պէտքն է, որ ամառ ձմեռ չունի... Ահա, պանդուխտ մշեցիներ, զըլլաւոր կէտերը այն կոչնագրին զոր Մշոյ առաջնորդարանը կընէ ձեզի ամբողջ հայութեան առջև:

Դուք չէք երթար, ժամանակները գէշ են կըսէք. միթէ անոնք ձեր հոգիները չեն. եւ կամ ինչպէ՞ս ուրիշ հայաստանցիներ հարիւրներով չայրենիք կերիւն ու կուզան:

Դուք զրամ չէք զրկեր, չունինք կըսէք, այս սարի այսպէս, բայց անցեալ ժամանակներու մէջ ինչո՞ւ

լուծ էք, եւ ինչպէ՞ս ձեր հաճոյքին կը գտնէք հիմա ալ:

Ձեր նամակ մը, ձեր առողջութեան լուրը անոնց իմացնե՞լն ալ մեծ զոհողութեան կը կարօտի:

Ու երբ դուք այս ամենէն բնական պարտականութիւններուն, ձեր հոգեբարտրներուն ազաւանքին անտարբեր կը մնաք, չէք զթար անոնց եւ ձեր սուտերը կը լուծէք, ա՛լ ի՞նչ փրկութիւն եւ յոյս կսպասէք օտար ազգիւրէն...:

Մէկ կողմ թողէք այս ընթացքը, որ ոչ միայն մարդկութեան եւ հայութեան անպատուաբեր է, այլ եւ կրօնքի եւ Ազատեճոյ առջեւ ալ դատապարտելի է, որովհետեւ, կըսէ Աստուածաշունչը. «Թէ որ մէկը իրեններուն ու մանաւանդ իր ընտանեացը հոգ չի տանիր, անիկա հաւատքը ուրսցած է, ու անհաւատ է մըն ալ գէշ է»:

Ղ. Կոնիսիան

Թուամանիա

գամներ ժողովրդեան ներքին կծանքէ գրել, և ժառանգիչ ընել իր թերի ու փաստակար կողմերը, ինչպէս որ մէկ երկու անձանց միջոցաւ բացարձակապէս ժողովրդեան բարոյապէս և թէ նիւթապէս դէպի կործանում առաջնորդող օրինակներն մէջ տեղ բերինք, որպէս զի միւսներն և ու օրինակութեամբ զգուշանային չհետեւիլ այդ տեսակներուն: Ինչպէս որ կը կարծէինք ու կը գրէինք, նոյնպէս ալ եղաւ:

Իր խելքով ու գաղափարով որպիսի հայն, կը կարծէր թէ՛ այդ տեսակ ինկածներու հետեւելով՝ ազգին մեծ ծառայութիւն մը մատուցած՝ և իր պարտականութիւնը կատարած կըլլայ, այլ երբէք մտքէն իսկ չէր անցունէր թէ՛ իր բարի ձգտումները դէպի շար կը գործածուին և շատերու ալ թշուառութեան և բարոյական անկման պատճառ կըլլան: Ինչպէս որ մինչև այսօր, օրինակներն ինքն ըստ ինքեան ցոյց տուին: Անուարանալի ճշմարտութիւն մըն է այս՝ «Ետքում» մեծ ծառայութիւն մատուցող Պուրկալի պանդուխտ հայ տարրին, հետզհետէ զգաստացնելով զանոնք—խաբուածներն—և հիմա տոտնք զզուանքով մը սկսած են հեռանալ մարդահրէշ ինկածներէ:

Ժողովուրդն՝ երբ այդ նկարագրուած իրական պատկերը իր աչքով կարթաց և տկանջով լսեց, այլևս այդ կարգացած օրուայ նիւթ ըրաւ իրեն, և ըստ այնմ սկսաւ զզուանքով մը վերաբերուիլ դէպի իր փաստաբան, որ տղրուկէ նման իր իւրաքանչիւր երակին փակուած՝ կը ծծէր անխղճօրէն, իսկ միւս կողմէն, այդ գաղանկները փոխանակ ամօնալու, խղճահարուելու և ուղղութեան գալու: Ընդհակառակն ևս առաւել համառած իրենց չարութեան մէջ, զեռ եւս կաշխատին ազգային շահերն ստնակոխ ընելու, մէկու վրայ բռնանալ, միւսին քծնել իրենց կիրքը առաջ տանելու: Եւ այդ առթիւ գինեատենէ գինեատեն մտնել ելնելով, որքան որ կրնան կը խմեն, և արբենալով դուրս կուգան, Բրիտոս, Աստուած, և կեզեցի, ևն: հայհայելով. մայրկուծեան սահմանէն դուրս եկած, և ցելի մէջի խօզի նմանած, այս որճարանէ միւս կը մտնեն կեղևն, իրենց ձգտած ըզեզով, առարկութիւններ դուրս կը բերեն «Ետքում»ի և իր թղթակցի դէմ, թէ՛ «ահա այսպէս. մեզ դէմ կը գրեն, մեր գաղանկները հրապարակ կը հանեն, մեր պարտքերն կը թւեն, ո՞վ կամ ի՞նչ կարող են մեզ ընելու, մենք կընենք՝ ինչ որ մեր կամքը կուզէ. ինչո՞ւ միւր առնելիքներն եւս չեն յիշեր: Այժմ տեղըն է հարցնել, ո՞ր առնելիք-

նիք, 10 կամ 16 օսմանեան լիրաներ մաս մը անբարոյական կանանց փոխ տալ, և պահանջած ժամանակին ալ. «ստորագրով» կողմէն ձեռնարկով փնտրել: Մարդկային կարգէն ինկած այդ պարտքը, կուզէ ո՞ր կանանց առնաներն ալ յիշեմ. գոնէ չը խղճահարուեցաւ հարկուտ անհատներու իրաւունքները կըտրելով մաս մը լիտիացած կանանց կողորդներն լիցնելու. ցեռ եւս առանց ամօնալու ելեր է առարկութիւններ ընելու, և ազգային պատուը հետ խաղալու: Ամէն բան չափ ու սահման մը ունի, իսկ այս անսակներուն լրբութեան չափը ու սահմանը անցած է:

Պաթումէն քղեցի նշան անուշով մէկը իր հօրեղբայրը Թագէտին: Մարդար չափուչի հասցեով 15 հաս ոռուական մանէթ զրկած էր մարտ ամսոյ մէջ, որպէս զի իր հօրեղբայր ճանապարհի ծախս ընելով անդ երթար: Մարդար չափուչ այդ ստակն առնելով, փոխանակ յիշեալ խեղճին վճարելու, ինքն շուսլարար աստ և անդ կը ծախսէ: Պաթումէն գրաւոր թուխանձանքներ կըլլար. այս կողմէն չէր պատասխանուէր, անոր համար որ խեղճն այդ խարդախ անձու գարձէն տեղեկութիւն չուներ, և բուն իսկ ստակ զալն ալ չէր մաքրէր, ու եկած նամակներու երեսն իսկ չէր տեսնար, հետեւարար բան մը չէր կրնար գրել. սեպտ. ամսոյ վերջերն, այդ խարդախութիւն երեւան ելաւ: Պաթումէն ուղղակի նամակ մը այդ խեղճի ձեռք հասնելով, ստակի խնդիրը մէջը կը պարզէր: Մարդը կրակ կըտրած, Մարդարին կը վաղէ, գործուած խարդախութեան մասին բացատրութիւն և ստակը կը պահանջէ: Կուր մը մէջերնին կը փրթի, և ծայրը մինչ ի նամակատուն կը հասնի, իսկ Մարդարն անհիմն առարկութիւններով 15 մանէթը 10 զեզելով կուտայ. յետոյ նամակատան արձանագրութեան մէջ 45 ֆրանքի արձանագրութիւն կը գտնուի, որ 15 մանէթ կընէ. մարդն հարկագրուած 5 մանէթի համար Մարդարի վրայ գտնուած ժամացոյցը գրաւելու տայ և կուտէ: Ահա Պուրկալի հրապարակի վրայ գտնուած խարդախ գիմակներ, որ երկար ու ձիգ տարիներու շարքին ինչե՞ր չեն գործած ու մարտած:

Ուրիշ մի դէպք եւս. ամսոյ 26ին մշեցի Օրկանոց պիւղաջի Պողոս անուշով մէկ մը, որ իր պիւղաջիներն իր վրայ համարում ունենալով, 11 գաղղիական ոսկի յանձնած էին վաճառականի մը քով պահուելու համար, յիշեալ Պողոսն իր ձեռամբ տեղս վաճառական Տիար Աստուածատրեան-

ներուն քով պահուած և փոխանակող իր ստացած էր իր անուամբ. ծածուկէն այդ ստակը առնելով ֆրանսական Մէսսոմբրի շողենու նստելով փախաւ, այդ խեղճերն անգործ և թշուառութեան մէջ ձգելով. ահա մի քանի խարդախներու գործած անիրաւութիւններէն օրինակուած ու թուաւորուած ժողովուրդ. այլ եւս ընկեր ընկերին սկսաւ շարիք հասցնել:

Հայ Յեզ. Գաշնակցու թեան վերաբերող և Կ. Պոլսոյ Խաչիար խանի մէջ Հաճի պէյի ահօսօթի խախտելի Ե. Արմենակ Արապեան հիւժախտի երկարատեւ հիւանդութենէ մը յետոյ, ամսոյ 15ին իր մահկանացուն կըրեց:

Ինքոյ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Նոյեմբեր 4ին Պոլսէն Թուսին կը հեռագրեն. կը լսուի թէ հայերու կողմէն, հակառակ Պատրիարքի ժողովրդին սիզած յորդորներուն որ յեզափոխական քարոզիչներու սկանջ չը կարեն, խռովութիւններ տեղի ունեցած են՝ էրզրում, Պիթիլի, Մոշ և այլ տեղեր:

Նոյեմբեր 6ին «Նեոս. Բում» Պոլսէն կը հեռագրեն. վերջին շարթուն Առուական սահմանէն տաճկաստան անցեր է 120 հոգիէ բաղկացած հայկական հրոսախումբ մը և Պիթիլիի վրայ թը վաղ մը ապստամբներ է: Բիշ մը վերջը խումբը բնդհարում տեսցեր է թուրք զօրքերու հետ. երկու կողմերէն 12 սպանուած և վիրատուրեալներ կան: Երկու հայ կուլանուարուած են:

Բոս վերջին տեղեկութիւններու քիտներն ալ հայերուն ետեւէն ինկած են. կը լսուի թէ քիւրտ փաշայի մը սպան ընդհարման մը մէջ սպանուած է:

Հրոսախումբը տարազնուած է, մաս մաս ապստամբելով ուսական հողի վրայ:

Վենետիկի Միթիթարեանները «Խոզմալէպոյի հետ պատկերազարդ յանելուած մը պիտի հրատարակեն ի նպատակ հայ որբերու: Շատ լուսամբի գինը պիտի ըլլայ 2 ու կէս ֆրանք:

Կը յուսանք թէ այդ յուսուածները ստացողները շատ պիտի ըլլան. քանի որ Միթիթարեան հայերը շատ գործնական օգուտ մը կուզեն տալ հայ անօգնական մանուկներուն:

Խարբերութեն շտապ զիջելիք Ամերիկա կը գաղթեն, կը կարծուի թէ ամուսնանալու համար կերթան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբեր 6ին 4000 Պօէրներ լքած են Լատամիթի շրջակայ բլուրները, երթալու Անգլիական հրամանատար Պիլլերի ընթացքը խանգարելու համար:

Նոյն օրը Լատամիթը գիշեր և ցորեկ ուժակոծուած է:

Պօէրները որոշած են իրենց լքած քաղաքները և զիւղերը այրել. բոլոր անտունները կը ժողլին, որպէս զի անգլիական բոլոր զօրքերը ժողված միջոցին և թէ յարձակողական գիրք բռնեն իրենք պաշտպանողական գիրք բռնելու համար շատ պաշար տեսնան, իսկ անգլիացիները պաշար չի գտնեն:

Անգլիական քաղաքները կը պիմանան անոր համար, որ Լատամիթ և այլ քաղաքներու մէջ գիտնափոր աներ կան շինուած, որով աւ մերը չեն կրնար փասեր: Բաղաքի մէջ գտնուածները կապրին այդ գեռնափոր տուներուն մէջ:

Գերմանական թերթի մը տուած տեղեկութիւններուն համաձայն Աուլմանը համաձայնած չէ որ Կիրսնական ամիրալ Ֆուրիէ իր զօրհասարներով ճարտանէլէն անցնի, չը նայելով որ Պ. Քոնսթան ֆրանսական գեսպանը Աուլմանին յիշեցուցեր է թէ Գերմանական կայսրը զրահաւոր նուախմբով անցաւ ճարտանէլէն:

Թանի Պոլսէն կը հեռագրեն թէ ստոյգ ազբուրներէ լմացուած է որ նախարարական խորհուրդը սկզբունքով ընդունած է Տէրիչ պանքոյի առաջարկութիւնը՝ երկաթուղոյ գիծը շինել մինչև Աուրա:

Պօէրներու գերած 2000 անգլիացիներէն 100 հոգի փախեր են անգլիական բանակատեղին:

Ճարտնի և Ռուսական յարաբերութիւնները լարուած ըլլալու լուրը կը հերքուի, նոյնիսկ անգլիական թերթերէ:

ԹՄՏՐՈՆ «ԱՆՆԷՂԱՆՆԵՐ»

«Վէսէլլո» հայ թատերական խումբը վաղը գիշեր, Նոյեմ. 11, պիտի ներկայացնէ «Մ. Տ. Գալուսնոյում» խիստ զուարճալի կատակախաղ 4 արար:

Խիստ ծիծաղաշարժ գաւեշտ մը:

Յ. ՃԱՆԿԻԿԻԿԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԹՅՆ ԻՆՍՏԻԿՍՏԱՌԱՆՈՑ Թիւ 389 Իսկիդր-պաշի

Կը վաճառուի ծրարտու, բոսթալի և աղերսողրի ամէն տեսակ բուրբ նաւ «Ետքում»ը:

Շատ ժողովը կը ծախուի նաև նամակատան գիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը: